ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՎԻԹԱՎՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (XX ԴԱՐԻ ՎԵՐՋ – XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Է. 00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ **ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Ա. Սաֆրաստյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մ. Աբրահամյան**

պ.գ.թ. Լ. Ս. Հովսեփյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հուլիսի 11-ին, ժ. 12.30-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4, 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2016 թ. հունիսի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար **պ.գ.թ. Գ. Ա. Մարգարյան**

Թեմայի արդիականությունը: 1988 թվականի սկզբներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) բնակչությունն սկսեց ինքնորոշման գործընթաց, որն ամրագրվեց մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի որոշման մեջ՝ դուրս գալ Ադրբեջանական ԽՍՀ (ԱԽՍՀ) կազմից և մտնել Հայկական ԽՍՀ (ՀԽՍՀ) կազմի մեջ: ԼՂԻՄ բնակչության ինքնորոշման իրավունքի իրացմանը միտված քայլերն Ադրբեջանում հանգեցրին հայության նկատմամբ էթնիկ զտումների, կոտորածների ու հակահայ քաղաքականության խորացմանը, ինչը 1991 թ. վերաճեց լայնամասշտաբ պատերազմի հայ ժողովրդի դեմ, որը շարունակվում է մինչ օրս:

Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունն իրականացնող պետական կարևոր կառույցներից են այդ երկրի հատուկ ծառայությունները, որոնց գործունեության ամբողջական և համակողմանի հետազոտումը կարևոր գիտական և գործնական նշանակություն ունի Ադրբեջանի Հանրապետության (ԱՀ) ռազմաքաղաքական ղեկավարության արդի հակահայ քաղաքականության վերլուծման տեսանկյունից: Մասնավորապես կարևորվում է այն փաստը, որ Ադրբեջանի և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև 1994 թ. կնքված զինադադարից հետո Ադրբեջանը պատերազմը տեղափոխեց այլ դաշտ՝ դիվերսիոն-հետախուզական, տեղեկատվական, հոգեբանական, հաքերային, քարոզչական և այլն, որտեղ առաջնային դերակատարում վերապահվեց հատուկ ծառայություններին:

Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ)-ի դեմ իրականացվող թշնամական քաղաքականությունը, կնքված զինադադարի պարբերական խախտումները, ինչպես նաև դիվանագիտական ոլորտում բացահայտ հակահայ գործողությունները՝ առավել քան արդիական է դառնում այդ երկրի հատուկ ծառայությունների՝ ՀՀ և ԼՂՀ դեմ իրականացվող գործողությունների հետազոտումը: Ադրբեջանի ագրեսիվ գործողություններն ուղղակիորեն վտանգում են ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությունը, և այս համատեքստում լուրջ սպառնալիք է հանդիսանում ԱՀ հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը:

Թեմայի ուսումնասիրությունն անմիջականորեն առնչություն ունի ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության և Ռազմական դոկտրինի հետ: Մասնավորապես ՀՀ Ռազմական դոկտրինի I գլխի III կետի VIII ենթակետով ՀՀ ռազմական անվտանգության արտաքին սպառնալիք է հանդիսանում ՀՀ դեմ օտարերկրյա կազմակերպությունների, անօրինական զինված խմբավորումների և հատուկ ծառայությունների գործունեությունը[1]:

Ադրբեջանական հատուկ ծառայություններն ակտիվ մասնակցություն են ունեցել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունում

[1] Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին (ընդունվել է 2007 թ. դեկտեմբերի 25-ին), http://www.mil.am/media/2015/07/768.pdf

(ԱԴՀ) 1918-1920, ԱԽՍՀ-ում 1988-1991 թթ. հայկական կոտորածների, հայ ժողովրդի նկատմամբ էթնիկ զտումների իրականացմանը, ինչպես նաև XX դարի վերջերին և XXI դարի սկզբներին թե՛ ՀՀ տարածքում, թե՛ ՀՀ սահմաններից դուրս հայ ժողովրդի դեմ նախապատրաստել ահաբեկչական գործողություններ, մահափորձ ՀՀ նախագահի դեմ, դիվերսիա Հայաստանի ատոմային էլեկտրակայանի նկատմամբ և այլն, որոնք նախապատրաստման փուլում ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից բացահայտվել և խափանվել են:

Ադրբեջանի գործողություններին մեծապես աջակցել է Թուրքիան, որի հետ Ադրբեջանն ունի ռազմաքաղաքական սերտ հարաբերություններ:

Նշված իրողությունները փաստում են, որ թեման խիստ արդիական է և ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական կարևոր նշանակություն:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է հետազոտել ադրբեջանական հատուկ ծառայությունները և դրանց հակահայ գործունեությունը:

Ատենախոսությունը պատրաստելիս խնդիր է դրվել հայտնաբերել Ադրբեջանի հատուկ ծառայությունների և դրանց հակահայ գործունեության վերաբերյալ արխիվային նյութեր, փաստեր, փաստաթղթեր, հետազոտել դրանք և կատարել համակողմանի վերլուծություն: Մեր առջև դրել ենք մասնավորապես հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ԱԴՀ և ԱԽՍՀ հատուկ ծառայությունները և դրանց գործունեության, այդ թվում՝ հակահայ, առանձնահատկությունները,
- Քննության առնել ադրբեջանական հատուկ ծառայությունների մարմինների կառուցվածքը,
- Պարզաբանել ԱՀ հատուկ ծառայությունների գործունեության իրավական հիմքերը և հիմնական ուղղությունները,
- Քննության ենթարկել ԱՀ հատուկ ծառայությունների առջև դրված խնդիրները, նպատակները,
- Ուսումնասիրել և քննական վերլուծության ենթարկել Ադրբեջանում և Արցախում իրականացված հայկական կոտորածների ու էթնիկ զտումների գործում ադրբեջանական հատուկ ծառայությունների մասնակցության փաստերը,
- Վերլուծել արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ ադրբեջանական հատուկ ծառայությունների դերակատարության հանգամանքները,
- Ներկայացնել ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից ՀՀ և ԼՂՀ դեմ իրականացվող հետախուզական-քայքայիչ գործունեությունը XX դարի վերջերին, XXI դարի սկզբներին, վերհանել այդ գործունեության առանձնահատկությունները:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Ատենախոսության թեման ամբողջական հետազոտված չէ պատմագրության մեջ, և այս ուսում-

նասիրությունը առաջին փորձն է հնարավորինս համակողմանի ներկայացնելու ադրբեջանական հատուկ ծառայությունների պատմությունը, կառուցվածքը (ինչպես ԱԴՀ-ի և ԱԽՍՀ-ի, այնպես էլ ներկայիս ԱՀ-ի), դրանց առջև դրված խնդիրները, գործունեության հիմնական ուղղությունները, իրավական հիմքերը և հակահայ գործունեությունը: Փաստական, այդ թվում արխիվային բազմաթիվ նյութեր, կապված ադրբեջանական հատուկ ծառայությունների և դրանց հակահայ գործունեության հետ, լուսաբանվում և քննական վերլուծության են ենթարկվում առաջին անգամ:

Ատենախոսության մեջ առաջին անգամ ներկայացվում են ԱՀ հատուկ ծառայությունների կառուցվածքները, որոնց վերաբերյալ տեղեկությունները գաղտնի են, և ամբողջական պատկերն ստացել ենք՝ հիմնվելով բաց աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրման, համեմատության, վերլուծության վրա:

Առաջին անգամ վերլուծվում և ներկայացվում են նաև Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացված հայահալած քաղաքականության՝ ազգային խտրականության, կոտորածների, էթնիկ զտումների և արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ այդ երկրի հատուկ ծառայությունների մասնակցության փաստերը, այդ ծառայությունների կողմից ծրագրված ահաբեկչական, դիվերսիոն-հետախուզական և այլ քայքայիչ գործողությունները:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերը ևս գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Ատենախոսության մեջ տեղ գտած փաստավավերագրական նյութերի զգալի մասը հրապարակվում է առաջին անգամ:

Ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է XX դարի վերջերը, XXI դարի սկզբները, երբ հայոց ազգային զարթոնքի ու արցախյան շարժման համատեքստում ադրբեջանական իշխանությունները և հատուկ ծառայություններն Ադրբեջանում ու Արցախում սկսեցին իրականացնել հայերի էթնիկ հերթական զտումներն ու կոտորածները: Ատենախոսության մեջ պատմական անդրադարձ ենք կատարել նաև ԱԴՀ-ում 1918-1920 թթ. և ԱԽՍՀ-ում 1921-1988 թթ. հակահայ գործունեություն ծավալած ադրբեջանական հատուկ ծառայություններին, ինչը հնարավորություն է տալիս վերհանել XX դարի վերջերի, XXI դարի սկզբների Ադրբեջանի հակահայ քաղաքականության պատմական հիմքերը և շարժառիթները:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության համար որպես մեթոդաբանական հիմք օգտագործվել են ինչպես պատմահամեմատական մեթոդը, այնպես էլ Ադրբեջանի հատուկ ծառայությունների և դրանց հակահայ գործունեության վերաբերյալ առկա աղբյուրների,

նյութերի, փաստերի համադրման, քննական վերլուծության մեթոդները և օբյեկտիվության սկզբունքները:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Բացի պատմագիտական նշանակությունից՝ աշխատանքն ունի նաև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության դրույթները, եզրակացություններն ու փաստական նյութերն օգտագործվում են որպես ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնում դասավանդվող հատուկ առարկաների ուսումնական նյութ՝ ՀՀ ԱԱԾ աշխատակիցների մասնագիտական հատուկ պատրաստության, վերապատրաստման, որակավորման բարձրացման և այլ հոսքերում:

Աշխատության մեջ ներկայացված փաստագրական նյութերը և ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից տասնամյակներ շարունակ իրականացրած հակահայ գործունեության դրվագները կարող են օգտագործվել նաև ՀՀ և ԼՂՀ քաղաքացիների շրջանում հանրային գիտակցության ու զգոնության բարձրացման, նրանց նկատմամբ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների մարմինների կողմից ոտնձգությունների կանխարգելման նպատակով:

Ատենախոսության դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել պատմաբանների, ինչպես նաև քաղաքագետների, արևելագետների, հայ-ադրբեջանական հարաբերությունների խնդրով զբաղվող այլ մասնագետների համար, ինչպես նաև ռազմաուսումնական հաստատություններում օգտագործվել որպես ուսումնական նյութ:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել և պաշտոնական հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելքի բաժնի ընդլայնված նիստում, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի թիվ 1 և թիվ 4 ամբիոնների համատեղ նիստում, հիմնական դրույթները ներկայացվել են ատենախոսի կողմից հեղինակած հոդվածներում, առանձին դրույթներ ու եզրակացություններ՝ Երիտասարդ արևելագետների XXXVI միջազգային գիտաժողովում, տարբեր սեմինար-քննարկումներում: Ատենախոսության վերաբերյալ հեղինակի հրատարակած աշխատանքների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն: Ատենախոսությունը գրվել է հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն տարատեսակ աղբյուրների, արխիվային ու փաստավավերագրական նյութերի, հետազոտական գրականության հիման վրա:

Օգտագործվել են մոտ հինգ տասնյակ չհրատարակված փաստաթղթեր, արխիվային նյութեր: Լայնորեն օգտագործվել են ինչպես Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ), այնպես էլ ՀԱԱ հասարակական-քաղաքական բաժնի, ՀՀ դատական դեպարտամենտի արխիվի, ՀՀ անվտանգության մարմինների պատմության թանգարանի նյութերը:

Որպես սկզբնաղբյուր օգտագործել ենք նաև փաստաթղթերի ժողովածուներ[2], ժամանակակիցների հուշագրություններ[3], պաշտոնական աղբյուրներ, օրենքներ և իրավական այլ ակտեր, փաստավավերագրական ֆիլմեր, որոնք հնարավորություն են տվել ավելի հանգամանալից հասկանալու ադրբեջանական հատուկ ծառայությունների գործունեության, այդ թվում՝ հակահայ, առանձնահատկությունները, շարժառիթները, ձևերը, մեթոդները, իրավական հիմքերը, կառուցվածքը: Ադրբեջաներենից թարգմանվել և լայնորեն օգտագործվել են մոտ երկու տասնյակ իրավական ակտեր: Փաստաթղթերը ծավալուն լինելու պատճառով ամբողջությամբ չեն ընդգրկվել ատենախոսության մեջ, սակայն նախատեսվում է դրանք հրատարակել առանձին գրքույկով:

1918-1920 թթ. ադրբեջանական հետախուզական մարմինների հակահայ գործունեության վերաբերյալ տեղեկություններ ենք հայթայթել 1919 թվականից Բաքվում գտնվող Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների կողմից ՀՀ արտաքին գործերի նախարարություն և այլ ստորաբաժանումներ ուղարկած բազմաթիվ հեռագրերից, զեկուցագրերից, նամակներից (նյութերը պահպանվում են Հայաստանի Ազգային արխիվում), ՀՀ Ռազմական նախարարության տպարանում 1920 թ. հրատարակված՝ «Գաղտնի փաստաթղթերը. Ադրբէջանի դաւադրական գործունէութիւնից մի էջ» ժողովածուից (ժողովածուի մեջ տեղ են գտել Երևանում գտնվող Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչների հեռագրերը Բաքու և Թբիլիսի), ինչպես նաև պատմական գիտությունների դոկտոր Վ. Վիրաբյանի աշխատություններից[4]:

---

[2] Արխվային վավերագրեր, հավելված 1-5, **Վիրաբյան Վ.,** Հայաստանի պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., 2015, Գաղտնի փաստաթղթերը. Ադրբէջանի դաւադրական գործունէութիւնից մի էջ, Եր., 1920, **Մկրտչյան Շ.,** Արցախյան գրառումներ (փաստավավերագրական ժողովածու), Եր., 2001, **Барсегов Ю.,** Нагорный Карабах в международном праве и политике, Документы и комментарий, т. I, М. 2008, Нагорный Карабах в международном праве и политике, Комментарии к документам, т. II, М., 2009, Лубянка. ВЧК-КГБ. Документы, Справочник. Москва, 1997, Чекисты Азербайджана. Документы, очерки, рассказы. Баку, 1981.

[3] **Քաջազնունի Յովհ.,** Հայաստանի Հանրապետութիւն, Եր., 1993, **Кривопусков В.,** Мятежный Карабах, Ереван, 2013, **Mehmed-zade Mirza-Bala**, Milli Azerbaycan hareketi : Milli az. «Müsavat» halk fırkası tarihi, Berlin, 1938:

[4] **Վիրաբյան Վ.,** Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից), Եր., 1999, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումն ու գործունեությունը 1918-1920 թթ., Եր., 2006, Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Եր., 2003, **Վիրաբյան Վ., Թունյան Վ.,** Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., 2009:

Ադրբեջանական հատուկ ծառայությունների կառուցվածքի, իրավական հիմքերի, գործունեության ուղղությունների, դրանց առջև դրված խնդիրների հետազոտման համար, բացի թարգմանված իրավական ակտերից (օրենքներ, կանոնադրություններ, հրամաններ, որոշումներ), որպես աղբյուր օգտագործել ենք նաև ԱՀ պաշտոնական կայքէջերը (նախագահի, հատուկ ծառայությունների, ուժային կառույցների), ինչպես նաև ԱՀ հատուկ ծառայությունների ղեկավարների մամուլի ասուլիսները, ելույթները, ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում առկա տեղեկությունները ադրբեջանական հատուկ ծառայությունների վերաբերյալ, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնում հրատարակված նյութերը[5] և այլն:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեության ուսումնասիրման համար որպես հիմնական աղբյուրներ օգտագործվել են 1988-1994 թթ. պարբերական մամուլը, մասնավորապես՝ «Արցախկանչ», «Երեկոյան Երևան», «Զարթօնք», «Խորհրդային Հայաստան», «Խորհրդային Ղարաբաղ», «Հայաստանի Հանրապետություն» «Ուրբաթ», «Օրինապահության դիրքերում», «Правда» թերթերը, ՀՀ Ազգային արխիվում պահվող բազմաթիվ վկայություններ, փաստեր, հաղորդագրություններ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի տեղեկագրերը, Մ. Գրիգորյանի հեղինակած «Սովորական ցեղասպանություն» ֆիլմաշարերում տեղ գտած փաստական նյութերը, ականատեսների վկայություններ, ԽՍՀՄ ՆԳՆ-ի, ՊԱԿ-ի, դատախազության, ՀՀ ազգային անվտանգության մարմինների պատմության թանգարանում պահվող որոշ նյութեր, Հայաստանի ՊԱԿ-ի ղեկավարների զեկույցներ և այլն:

Աշխատությունը շարադրելիս օգտագործել ենք նաև հայ նշանավոր հետազոտողների, պատմաբանների աշխատությունները, հոդվածները, մասնավորապես՝ Ա. Ավագյանի[6], Ա. Գյուլխանդանյանի[7], Ա. Կազինյանի[8], Ա. Հովսեփյանի[9], Ա. Մանուկյանի[10], Բ. Ուլուբաբյանի[11], Գ. Չոբանյա-

---

[5] История органов безопасности Азербайджана, Материалы по истории органов безопасности Азербайджана, Академии и музею МНБ АР, ՀՀ ԱԱԾ ԳՈՒԿ, Եր., 2008:

[6] **Ավագյան Ա.,** Հյուսիսկովկասյան վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-71թթ.). Եր., 2011, Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ., «Հայկական բանակ», Եր., 2006, թիվ 3 (49):

[7] **Գիւլխանդանեան Ա.,** Անդրկովկասի Հանրապետութիւնները, «Հայրենիք», թիվ 4, Բոստոն, 1967:

[8] **Казинян А.,** Полигон «Азербайджан», Ер., 2011.

[9] **Հովսեփյան Ա.,** Հայրենական մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր, Եր., 2012:

[10] **Ամրիկյան Ա.** (Մանուկյան Ա.), Դոկտոր, դուք հետախու՞յզ եք, Եր., 2000:

[11] **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը. սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994:

նի[12], Գ. Ստեփանյանի[13], Դ. Կնյազյանի[14], Զարևանդի[15], Թ. Հակոբյանի[16], Է. Զոհրաբյանի[17], Լ. Հովսեփյանի և Վ. Իվանովի[18], Հ. Բաղդասարյանի[19], Հ. Դեմոյանի[20], Մ. Աղաջանյանի, Է. Ասատրյանի, Ս. Մինասյանի[21], Շ. Մկրտչյանի[22], Ռ. Սաֆրաստյանի[23], Ս. Չոբանյանի[24], Վ. Բաղրյան[25], Վ. Հովհաննիսյանի, Ա. Դարբինյանի, Կ. Մանոյանի, Հ. Ալվրցյանի[26], Վ. Ղազախեցյանի[27] և այլոց:

Հարկ է նշել, որ պատմական գիտությունների դոկտոր Գ. Ստեփանյանի՝ «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ.» հոդվածում առաջին անգամ օգտագործվել է ԱԴՀ-ում գործած «դահիճների կոմիտե» («cəlladlari komitəsi») կազմակերպության մասին տեղեկությունը, որը պահպանված է

---

[12] **Զոբանյան Գ.,** Իսլամի քաղաքական դերը հետխորհրդային Ադրբեջանում. Նորավանք, 21-րդ դար. Եր., 2013:

[13] **Ստեփանյան Գ.,** Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ., http://genhist.asj-oa.am/54/1/23-32.pdf.

[14] **Կնյազյան Դ.,** Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-20 թթ., Եր., 2008:

[15] **Зареванд,** Турция и Пантуранизм, Париж, 1930.

[16] **Հակոբյան Թ.,** Կանաչ և սև. արցախյան օրագիր, Եր., 2008, Հայացք Արարատից. հայերը և թուրքերը, Եր., 2012:

[17] **Զոհրաբյան Է.,** Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Եր., 2000, ինչպես նաև՝ Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր, 1920 թ. ապրիլ), Եր., 2002:

[18] **Овсепян Л., Иванов В.,** Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Ер., 2010.

[19] **Բաղդասարյան Հ.,** Հայերի էթնիկական մաքրում, բռնագաղթ և ցեղասպանություն Ադրբեջանում 1988-1991 թթ., Եր., 2013:

[20] **Демоян Г.,** Внешняя политика Турции и карабахский конфликт, Ер., 2013.

[21] **Աղաջանյան Մ., Ասատրյան Է., Մինասյան Ս.,** Ադրբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի. Ագրեսիայի իրավաքաղաքական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Եր., 2007:

[22] **Մկրտչյան Շ.,** Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, 2003:

[23] **Սաֆրաստյան Ռ.,** Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009:

[24] **Чобанян С.,** Государственная и национальная политика Азербайджана, Ереван,1993.

[25] **Բաղրյան Վ.,** Տեսադաշտ. 1988-1994 (Ղարաբաղյան ազատամարտ), Ստեփանակերտ, 2011,

[26] **Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա., Մանոյան Կ., Ալվրցյան Հ.,** Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, ՀՅ Դաշնակցության հրատարակություն. Եր., 2007:

[27] **Ղազախեցյան Վլ.,** Ադրբեջանի քայքայիչ գործունեությունը Հայաստանում 1920 թ., ՎԷմ համահայկական հանդես, 2013 թ. հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (43):

Հայաստանի ազգային արխիվում (Ֆ.245, ց.1, գ.12, թ.7), և մինչ այժմ այլ աղբյուրներում կազմակերպության մասին տեղեկություններ հայտնաբերված չեն:

Սակայն, հատկանշական է, որ հեղինակները (բացառությամբ ադրբեջանցի) իրենց աշխատություններում ադրբեջանական հատուկ ծառայություններին և դրանց գործունեությանը ուղղակիորեն չեն անդրադարձել, քանի որ հատուկ ծառայություններին բնորոշ է գործունեության գաղտնիությունը, բացի այդ էլ, նրանք իրենց առջև նման խնդիր չեն դրել: Օրինակ՝ Է. Զոհրաբյանը, Դ. Կնյազյանը, Ա. Գյուլխանդանյանը, Վ. Վիրաբյանը, Վ. Ղազախեցյանը և այլոք անդրադարձել են 1918-1920 թթ. հայ-ադրբեջանական հարաբերություններին, փաստել, որ Հայաստանում վխտում էին ադրբեջանական լրտեսներ ու գործակալներ, որոնք փորձում էին տարատեսակ քայքայիչ գործունեություն ծավալել Հայաստանում, սակայն չեն արձանագրել, թե այդ լրտեսներն ու գործակալները ադրբեջանական ո՞ր ծառայության կողմից էին գործուղված, ի՞նչ կոնկրետ խնդիրներ ունեին իրենց առջև դրված և գործունեության ի՞նչ մեթոդներ ու ձևեր էին փորձում կիրառել իրենց նպատակին հասնելու համար: Նույնը կարելի է ասել նաև խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի հայ-ադրբեջանական հարաբերություններին անդրադարձած հեղինակների աշխատությունների մասին: Այսպես, Ս. Զոբանյանը, Վ. Բաղրյանը, Շ. Մկրտչյանը, Ա. Կազինյանը Հ. Բաղդասարյանը, Բ. Ուլուբաբյանը, Վ. Բաղրյանը անդրադարձել են թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային ժամանակաշրջանում հայ-ադրբեջանական հարաբերությունների խնդրին, Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում իրականացված հայկական ջարդերին, էթնիկ զտումներին, սակայն խորությամբ չեն ուսումնասիրել դրանցում ադրբեջանական հատուկ ծառայությունների դերակատարության հանգամանքները. սակավ ուսումնասիրված է միայն ադրբեջանական ՕՄՕՆ-ի և ՊԱԿ-ի դերակատարությունը (Բ. Ուլուբաբյան, Շ. Մկրտչյան, Ս. Զոբանյան, Մ. Գրիգորյան): Ինչ վերաբերում է XX դարավերջին և XXI դարասկզբին ԱՀ-ում գործած հատուկ ծառայություններին և դրանց հակահայ գործունեությանը, ապա պետք է փաստենք, որ թեման բացարձակապես ուսումնասիրված չէ ո՛չ հայ, ո՛չ էլ օտարազգի հեղինակների կողմից: Այդ պատճառով հետազոտությանը մեծապես նպաստեցին արխիվային նյութեր, փաստաթղթեր, մամուլի հրապարակումներ, ՀՀ քրեական օրենսգրքի «Պետական դավաճանության» և «Լրտեսության» հոդվածներով դատապարտված անձանց դատավճիռները, Ադրբեջանի նախագահի հրամանները, որոշումները, ադրբեջանական հատուկ ծառայությունների պաշտոնական կայքէջերը, ՀՀ ազգային անվտանգության մարմինների մամուլի հրապարակումները և այլ նյութեր: Ընդ որում, ադրբեջանական պաշտոնական բոլոր կայքէջերը և բազմաթիվ ԶԼՄ-ների կայքէջեր ՀՀ տարածքում գտնվող օգտատերերի հա-

մար անհասանելի են (փակ), և մենք դրանցից օգտվել ենք համացանցային հատուկ ծրագրի միջոցով:

Օգտագործել ենք նաև ադրբեջանցի հետևյալ հետազոտողների ու վերլուծաբանների աշխատությունները, հոդվածները՝ Աբբասլը Քենանի[28], Էլշադ Գոջայի[29], գրող-հրապարակախոս Ադիգյոզալ Մամադովի[30], Ալիգիսմաթ Բադալովի[31], փիլիսոփայության դոկտոր Իլհամ Աբբասովի[32], Մեմեդ Ջաֆարլիի[33], իրավապաշտպան, քաղաքագետ, կոնֆլիկտաբան Արիֆ Յունուսի[34]: Օգտվել ենք նաև ԱՀ նախկին Ազգային անվտանգության նախարարության հրատարակած «Heydər Əliyev və milli təhlükəsizlik orqanları», (Բաքու, 2009), ինչպես նաև ադրբեջանական ՊԱԿ-ի կողմից հրատարակած «Чекисты Азербайджана. Документы, очерки, рассказы» (Баку, 1981) աշխատություններից:

Սակայն, հարկ է նաև նշել, որ ադրբեջանցի հեղինակների աշխատություններից օգտվելիս կանգնել ենք խնդրի առաջ, քանի որ դրանք մեծամասամբ գրվել են ադրբեջանական իշխանությունների պատվերով, և դրանցում հիմնականում բացակայում է անկողմնակալությունը: «Գրչով պատմություն ստեղծելու» սկզբունքով ադրբեջանցի հետազոտողները նենգափոխել են պատմությունը, գլխիվայր շուռ տվել պատմական իրողություններն ու փաստերը: Ուստի, ադրբեջանական աղբյուրներն օգտագործելիս փորձել ենք տարբերակել կեղծիքն ու սուտը, և դրանք համադրել այլ աղբյուրներում առկա փաստերի հետ:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանվում են ենթագլուխների, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը, թեմայի ժա-

---

[28] **Abbaslı Kənan**, Milli Təhlükəsizlik orqanlarının tarixi inkişaf mərhələlərinin müqayisəli təhlili, 2010, https://siyasielmler.wordpress.com/2010/12/07/milli-təhlukəsizlik-orqanlarinin-tarixi-inkisaf-mərhələlərinin-muqayisəli-təhlili/.

[29] **Elşad Qoca**, Azərbaycan kəşfiyyatı və əks-kəşfiyyatı: 1918-1920-ci illərdə, http://qaynar.info/xeber-azrbaycan-kfiyyat-v-ks-kfiyyat-1918-1920-ci-illrd-t31461.html, http://qaynar.info/xeber-azrbaycan-kfiyyat-v-ks-kfiyyat-1918-1920-ci-illrd-t32530.html,

[30] **Adıgözəl Məmmədov**, 60 ilin mübahisəsinə son qoyan kitab, http://publika.az/p/3905:

[31] **Əliqismət Bədəlov**, Vətənin təhlükəsizliyini qorumaq çox şərəfli işdir, Xalq qəzeti.- 2009.- 20 mart.- S.6., http://anl.az/down/meqale/xalqqazeti/xalqqazeti_mart2009/73000.htm.

[32] **Abbasov Ilham,** Azərbaycan Xalq Cümhuriyyəti dövründə milli təhlükəsizlik organlarının təşkili və fəaliyyəti, http://respublica-news.az/index.php/dig-r-x-b-rl-r/dig-r-x-b-rl-r/item/2694-azaerbaydzan-khalg-dzumhuriyyaeti-doevrundae-milli-taehlukaesizlik-organlarinin-taeshkili-vae-faealiyyaeti, 20 Mart 2014.

[33] **Məmməd Cəfərli**, Azərbaycan Demokratik Respublikasının milli təhlükəsizlik orqanları, Bakı, 2004:

[34] **Юнусов А.,** Исламский фактор в Азербайджане, Баку, 2013.

մանակագրական սահմանները, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ **«Ադրբեջանի հատուկ ծառայությունները և դրանց գործունեության հիմնական առանձնահատկությունները (1918 – 1991 թթ.)»**, բաղկացած է երկու ենթագլխից՝ **«Հատուկ ծառայությունները Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունում և դրանց գործունեությունը Հայաստանի դեմ»** և **«Խորհրդային Ադրբեջանի հատուկ ծառայությունները»**:

Առաջին ենթագլխում մանրամասն ներկայացվում են ԱԴՀ-ում ստեղծված և գործունեություն ծավալած հատուկ ծառայությունները, ինչպես նաև այդ ծառայությունների հակահայ գործունեության վերաբերյալ փաստեր: ԱԴՀ ղեկավարությունը հայկական բազմաթիվ տարածքների նկատմամբ ունեցած իր նկրտումներն իրագործելու նպատակով ՀՀ դեմ ծավալել է քայքայիչ գործունեություն՝ զինելով Հայաստանի տարածքում բնակվող մահմեդական բնակչությանը, հրահրելով ազգամիջյան բախումներ, ինչպես նաև ծավալել լրտեսական գործունեություն: Այսպես, 1919 թ. մարտ ամսին Երևանում բացված Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը դարձել էր հակահայկական գործողությունների մշակման և ուղղորդման լրտեսական-հետախուզական կենտրոնատեղի, այլ կերպ ասած՝ ռեզիդենտուրա, որում կենտրոնացած գործակալական ցանցը տեղեկություններ է հավաքել ՀՀ զինված ուժերի և զորաշարժերի մասին, կատարել քաղաքական դիտարկումներ, տեղեկություններ հավաքել ՀՀ ֆինանսական հնարավորությունների վերաբերյալ, հրահանգներ ու խորհրդատվություն տվել սեփական կառավարությանը, թե ինչպես և ինչ ձևերով է հնարավոր վնաս հասցնել ՀՀ ազգային-պետական անվտանգությանը, անգամ կառավարությանը հուշել մահմեդական տարրերով բնակեցված Հայաստանի շրջաններում ապստամբություն բարձրացնելու համար հարմար ժամկետներ:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում է ԱԽՍՀ հատուկ ծառայությունների համակարգը, որը, ԽՍՀՄ-ի պետանվտանգության համակարգի մաս կազմելով, ենթարկվել է բոլոր այն վերածևումներին, որոնք եղել են ողջ ԽՍՀՄ-ում: Հատկանշական է, որ խորհրդային իշխանության տարիներին ևս ադրբեջանական հատուկ ծառայությունները ծավալել են հակահայ գործունեություն՝ իրականացնելով ազգային խտրականության, էթնիկ զտումների քաղաքականության:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունները, դրանց գործունեության իրավական հիմքերը և հիմնական ուղղությունները»**, ևս բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների մարմինները և դրանց գործունեության իրավական**

հիմքերը», ներկայացվում են ԱՀ-ում 1991 թվականից գործունեություն ծավալող հատուկ ծառայությունների մարմինները.

• Ազգային անվտանգության նախարարությունը, որը 2015 թ. դեկտեմբերի 14-ին ԱՀ նախագահ Ի. Ալիևի հրամանագրով լուծարվեց ու դրա հիման վրա ստեղծվեցին երկու հատուկ ծառայություններ՝ Պետական անվտանգության ծառայությունը և Արտաքին հետախուզության ծառայությունը,

• Պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչությունը,

• Հատուկ պետական պահպանության ծառայությունը,

• Պետական սահմանապահ ծառայությունը,

• Կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության էլեկտրոնային անվտանգության կենտրոնը:

Ենթագլխում նաև քննության են ենթարկվում այդ ծառայությունների գործունեության իրավական հիմքերը:

Երկրորդ՝ **«Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեության հիմնական ուղղություններն ու խնդիրները»** ենթագլխում մանրամասնորեն ներկայացվում են ԱՀ հատուկ ծառայությունների գործունեության ուղղություններն ու դրանց առջև դրված խնդիրները: Մասնավորապես փաստել ենք, որ ԱՀ իշխանությունները երկրի հատուկ ծառայությունների հետախուզական մարմիններին իջեցրել են հրահանգ՝ ծավալել հակահայկական գործունեություն, այդ թվում՝ ահաբեկչական, դիվերսիոն-հետախուզական, տեղեկատվական, քարոզչական, հաքերային և այլն, իսկ հակահետախուզական մարմիններն օգտագործվում են կրոնական, էթնիկ և ազգային փոքրամասնությունների ու ընդդիմության ձայնը, սոցիալ-քաղաքական շարժումները ճնշելու նպատակով: Եվ պատահական չէ, որ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները բազմիցս հանդես են եկել Ադրբեջանի իշխանությունների դեմ՝ մեղադրելով նրանց անօրինական ձերբակալություններ իրականացնելու, երկրում մինչև հարյուրի հասնող քաղաքական բանտարկյալների առկայության մեջ:

Երրորդ գլուխը՝ **«Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը (XX դարի վերջ – XXI դարի սկիզբ)»,** կազմված է երեք ենթագլուխներից՝ **«Հայերի կոտորածներն Ադրբեջանում և այդ երկրի հատուկ ծառայությունների դերը կոտորածների իրականացման գործում (1988-1991 թթ.)», «Ադրբեջանի հատուկ ծառայությունների գործողությունները Արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ»** և **«ՀՀ և ԼՂՀ դեմ Ադրբեջանի հատուկ ծառայությունների հետախուզական-քայքայիչ գործունեությունը (XX դարի վերջ – XXI դարի սկիզբ)»:**

Երրորդ գլխի առաջին ենթագլխում մանրամասն ներկայացվում են Ադրբեջանում 1988-1991 թթ. հայերի կոտորածների իրականացման գործում այդ երկրի հատուկ ծառայությունների դերակատարության փաստե-

ը, քննության ենթարկվում Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և այլ բնակավայրերում հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացված ցեղասպան քաղաքականության, ԼՂԻՄ-ի, Գետաշենի, Շահումյանի շրջանների բնակիչների բռնի տեղահանման գործում ադրբեջանական հատուկ ծառայությունների մեղսակցության հանգամանքները:

Երկրորդ ենթագլխում վերլուծվում են Արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ ադրբեջանական հատուկ ծառայությունների գործողությունները: Մասնավորապես փաստել ենք, որ 1988-91 թթ. Ադրբեջանի հակահայ քաղաքականության իրականացման ու արցախյան շարժումը ճնշելու ռազմական ուղղությունը ստանձնեցին ադրբեջանական ՕՄՕՆ-ը (Отряд милиции особого назначения), Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ) և Պետական անվտանգության կոմիտեն (ՊԱԿ), որոնք հանձնարարություն ունեին ոչ միայն ամեն կերպ կանխել Արցախյան շարժումը, չեզոքացնել շարժման առաջնորդներին և ակտիվիստներին, այլև վայրագություններ ու կոտորածներ իրականացնել Ղարաբաղում:

Երրորդ ենթագլխում ուսումնասիրվում է XX դարի վերջերին, XXI դարի սկզբներին Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից ՀՀ, ԼՂՀ դեմ իրականացված հետախուզական-քայքայիչ գործունեությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի «Պետական դավաճանություն» և «Լրտեսություն» հոդվածներով դատապարտված անձանց կոնկրետ քրեական գործերի, դատավճիռների և այլ փաստերի հիման վրա:

1993-2016 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից ձերբակալվել են Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից հավաքագրված 20 գործակալներ, որոնք, հետախուզական բնույթի տարատեսակ տեղեկություններ հավաքելուն զուգահեռ, հանձնարարություն են ունեցել նաև իրականացնել դիվերսիոն, ահաբեկչական գործողություններ:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների հետախուզական ու դիվերսիոն-հետախուզական ստորաբաժանումները հրահանգավորված են ՀՀ և ԼՂՀ դեմ իրականացնել տարատեսակ քայքայիչ գործողություններ, հետախուզա-տեղեկատվական, դիվերսիոն-հետախուզական և ՀՀ, ԼՂՀ անվտանգությանը վնասող այլ քայքայիչ գործունեություն: Եվ եթե ՀՀ ու ԼՂՀ Ազգային անվտանգության մարմիններն ու զինված ուժերը թուլացնեն զգոնությունն ու չբացահայտեն, չխափանեն ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից նախապատրաստվող ու պլանավորվող քայքայիչ ակցիաները, սադրիչ գործողություններն ու դիվերսիաները, ապա խստորեն կվտանգվի հայ ժողովրդի անվտանգությունը:

Միաժամանակ արձանագրել ենք, որ պետական դավաճանության և լրտեսության հոդվածներով դատապարտված անձինք հիմնականում հավաքագրվել են Թուրքիայի Հանրապետությունում գործունեություն ծավալած ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցների կողմից:

Եզրակացություններում ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

1. Ստեղծման օրվանից սկսած՝ 1919 թ. մարտի 28-ից, ադրբեջանական հատուկ ծառայությունները նպատակադրված են եղել իրականացնել հակահայ գործողություններ հետևյալ հիմնական ուղղություններով՝ հետախուզական տեղեկատվության հայթայթում, Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման խոչընդոտում, Հայաստանի տարածքում բնակվող մահմեդական բնակչությանը Հայաստանի իշխանությունների նկատմամբ ապստամբական ու քաղաքացիական պատերազմական գործողությունների հրահրում, այդ նպատակով նրանց ֆինանսավորում, լրտեսական գործունեության ծավալում:

2. 1919-1920 թթ. ԱԴՀ-ում ստեղծված և գործունեություն ծավալած հատուկ ծառայության մարմինները, տիրապետելով հետախուզական և հակահետախուզական գործունեության որոշ մեթոդների և ձևերի (ինչպես օրինակ՝ դիվանագիտական քողի տակ հանդես գալը, գործակալներ հավաքագրելը, գաղտնագրերից օգտվելը և այլն), այնուհանդերձ Հայաստանի անվտանգության դեմ ծավալած գործունեության մեջ շոշափելի արդյունքների չեն հասել, քանի որ, համադրելով հայկական և ադրբեջանական աղբյուրներում տեղ գտած պատմական փաստերը, նկատելի է դառնում, որ ադրբեջանական հատուկ ծառայություններն իրենց հակահայ գործունեության մեջ հիմնականում ունեցել են ձախողումներ: Հայաստանի առաջին հանրապետության անվտանգության մարմինների աշխատակիցների նպատակադրված ու անձնուրաց աշխատանքի շնորհիվ հնարավոր է եղել խափանել ադրբեջանական հատուկ ծառայությունների քայքայիչ գործունեությունը:

Հատկանշական է, սակայն, որ մոտ երկամյա գոյության ընթացքում ԱԴՀ-ն ստեղծել էր պետական անվտանգության համակարգում կարևորագույն դերակատարում ունեցող հատուկ ծառայություններ, որոնք հստակ սպառնալիք էին ներկայացնում Հայաստանի ազգային անվտանգությանը:

3. Ադրբեջանի խորհրդայնացումից հետո այդ երկրի հատուկ ծառայությունները, ԽՍՀՄ-ի պետանվտանգության համակարգի մաս կազմելով, ենթարկվեցին բոլոր այն փոփոխություններին, որոնք եղան ողջ ԽՍՀՄ-ում:

Այնուհանդերձ, խորհրդային տարիներին ևս այդ երկրի հատուկ ծառայությունների գործունեության մեջ նկատելի էր հակահայ ուղղվածությունը: ԱԽՍՀ հատուկ ծառայությունները տարբեր մեթոդներով ու ձևերով իրականացնում էին ազգային խտրականության, ահաբեկչության, էթնիկ զտումների քաղաքականություն: Դա առավել ցայտուն դրսևորվեց հատկապես Հ. Ալիևի կողմից բարձր պաշտոններ ստանալուց հետո (Հ. Ալիևն ինքն է անձամբ բազմիցս խոստովանել այդ փաստը, որին անդրա-

դարձ է կատարված ատենախոսության մեջ), ինչպես նաև Գորբաչովյան վերակառացման և երկրում «ժողովրդավարության» որոշակի տարրեր նշմարվելու շրջանում: Վերոնշյալ և մի շարք այլ գործոններ նպաստեցին պանթյուրքական կազմակերպությունների ու ազգայնական տարրերի՝ Ադրբեջան ներթափանցմանը, որոնց հետ էլ, համագործակցելով ադրբեջանական հատուկ ծառայություններն, իրականացրին հակահայ հերթական արշավը թե՛ Ադրբեջանում, թե՛ բովանդակ Արցախում:

4. 1988 թ. արցախահայության արդարացի պահանջը՝ դուրս գալ ԱԽՍՀ կազմից և մտնել ՀԽՍՀ կազմի մեջ, է՛լ ավելի սրեց Ադրբեջանի իշխանությունների հակահայ տրամադրվածությունը և հատուկ ծառայություններին ու ազգայնական տարրերին հրահանգ իջեցվեց իրականացնել կոտորածներ Ադրբեջանի հայաշատ բնակավայրերում: Արդյունքում ադրբեջանական ծայրահեղականները, օգտվելով Ադրբեջանի իրավապահ մարմինների ու հատուկ ծառայությունների թողտվությունից, շատ դեպքերում՝ գաղտնի կամ բացահայտ օժանդակությունից, Սումգայիթ, Կիրովաբադ, Բաքու քաղաքներում և այլ բնակավայրերում իրականացրին տեղի հայության կոտորածներ:

5. Արցախյան շարժման սկզբնավորմանը զուգընթաց՝ ադրբեջանական իշխանությունները հատուկ ծառայություններին հրահանգավորեցին ամեն գնով ճնշել շարժումը: Այդ նպատակով բանտերից ազատ արձակվեցին հանցագործներ, հավաքագրվեցին կամավորներ, բաժանվեց զենք-զինամթերք: Հակահայ քաղաքականությանը լծվեց նաև ՆԳՆ կազմում ստեղծված ՕՄՕՆ-ը, որը ադրբեջանական իշխանությունները համալրեցին ադրբեջանցի ազգայնամոլներով, հանցագործներով:

6. Ադրբեջանում և Արցախում հայ էթնիկ զտումների ու կոտորածների իրականացման գործում մշտապես ակնհայտ է Թուրքիայի մասնակցությունը: Թուրքիան լուրջ ներդրում ունեցավ ինչպես Ադրբեջանի ռազմականացման գործում՝ ակտիվորեն մասնակցելով իր դաշնակցի ռազմական դոկտրինայի ստեղծմանը, այնպես էլ զինված ուժերի և հատուկ ծառայությունների ձևավորման գործընթացին:

7. Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի և հետագա տարիներին ադրբեջանական հատուկ ծառայությունները կազմակերպեցին և իրականացրին Հայաստան մտնող գազատարի պայթեցումներ՝ թվով 13 անգամ, հայ-ռուսական, հայ-իրանական, հայ-վրացական հարաբերությունների սրմանը միտված սադրիչ գործողություններ, պլանավորեցին և գործողություններ իրականացրին Երևանի «Էրեբունի» հյուրանոցում, ատոմակայանի տարածքում ահաբեկչություն իրականացնելու ուղղությամբ, ծրագրեցին և սկսեցին նախապատրաստել մահափորձ ՀՀ նախագահի, հասարակական-քաղաքական գործիչների դեմ, ահաբեկչական այլ ակտեր:

8. Ոչ մի կերպ չկարողանալով համակերպվել 1991-1994 թթ. պատերազմում կրած պարտության հետ՝ ադրբեջանական իշխանությունները

XXI դարի սկզբներին նավթադոլլարներից ստացված հսկայական միջոցների հաշվին սկսեցին տարբեր երկրներից ձեռք բերել հարձակողական և պաշտպանողական զինատեսակներ՝ փորձելով Հայաստանի նկատմամբ ստանալ գերակշռություն սպառազինության առումով: Միաժամանակ ադրբեջանական հատուկ ծառայությունների առջև դրվեց խնդիր՝ ամեն կերպ ստանալ հետախուզական բնույթի տեղեկություններ, մասնավորապես, ՀՀ և ԼՂՀ ԶՈՒ սպառազինության, ռազմական տեխնիկայի, դրանց թարմացման, արդիականացման, ԶՈՒ թվաքանակի, բանակի մարտունակության, զորամիավորումների ու զորամասերի տեղակայման վայրերի, զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի վերաբերյալ:

9. ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից ձերբակալված և ՀՀ քրեական օրենսգրքի «Պետական դավաճանություն» (299-րդ) և «Լրտեսություն» (302-րդ) հոդվածներով դատապարտված անձանց վերաբերյալ դատավճիռների, ինչպես նաև առկա այլ փաստերի, գրականության ու մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանի հատուկ ծառայությունները ՀՀ և ԼՂՀ զինված ուժերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար դիմում են տարատեսակ քայլերի ու միջոցների, մասնավորապես.

- Գործուղել են հետախուզության աշխատակիցներ հատկապես այն երկրներ, որտեղ կան հայկական համայնքներ և ՀՀ հետ կա կայուն կապ (ՌԴ, Վրաստան, Ուկրաինա, Թուրքիա, Իրան),
- Հանդես են գալիս սփյուռքահայ տարբեր բարեգործական կազմակերպությունների անվան տակ՝ ներկայանալով հայի անունով՝ Վարդան, Տիգրան, Արմեն, Արման, Սեյրան և այլն, և ՀՀ քաղաքացիներին փորձում խաբել, իբր Հայաստանին և Ղարաբաղին օգնություն տրամադրելու նպատակով իրենց անհրաժեշտ են տարաբնույթ տեղեկություններ,
- Վճարում են խոշոր չափի գումարներ ցանկացած, հատկապես ռազմական բնագավառի հավաստի և գաղտնիության դրոշմագրով տեղեկատվության համար,
- Սերտորեն համագործակցում են թուրքական հատուկ ծառայությունների հետ,
- Սոցիալական կայքերում հանդես են գալիս ազգությամբ հայի կենսորոշիչ տվյալներով՝ փորձելով ռազմական բնույթի տեղեկություններ կորզել հատկապես ՀՀ և ԼՂՀ զինված ուժերում ծառայող կամ նոր զորացրված զինծառայողներից,
- Իրականացնում են դիվերսիոն-հետախուզական գործողություններ, որոնք, իրավիճակը ապակայունացնելուն զուգահեռ, նպատակ ունեն նաև ստուգել ՀՀ, ԼՂՀ զինված ուժերի զգոնության աստիճանը:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործողությունները արդյունք են այդ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության որդեգրած դիրքորոշման: Ու քանի դեռ Ադրբեջանը կառավարող շրջանակ-

ները շարունակում են հայ ժողովրդի նկատմամբ իրականացնել պետական ահաբեկչական քաղաքականություն՝ նաև համագործակցելով Թուրքիայի իշխանությունների հետ, այդ երկրի հատուկ ծառայությունները պլանավորելու և փորձելու են հայության նկատմամբ իրականացնել տարատեսակ քայքայիչ գործողություններ:

Այսպիսով, ԱՀ իշխանությունների և դրանց հրահանգները կատարող հատուկ ծառայությունների հակահայ ագրեսիվ քաղաքականությունը անհրաժեշտ է դարձնում բարձրացնել ՀՀ և ԼՂՀ անվտանգության ապահովման մակարդակն ու ազգաբնակչության զգոնության աստիճանը:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրատարակումները

1. Ռազմական համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի միջև ընդդեմ Հայաստանի (1918-1920 թթ.): Պատմություն և մշակույթ: Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), III հատոր, Եր., ԵՊՀ հրատ., 2014, էջ 202-211:
2. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հատուկ ծառայությունները և դրանց գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության դեմ (1918-1920 թթ.): 21-րդ ԴԱՐ, «Նորավանք» Գիտակրթական հիմնադրամի հանդես, 4 (56), Եր. 2014, էջ 52-68:
3. Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը 1988-1994 թթ.: Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, 1 (16), Եր., 2015, էջ 3-16:
4. Ադրբեջանի հետախուզական մարմինները. գործունեության իրավական հիմքերը և հիմնական ուղղությունները: Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, 1 (646), Եր., 2016, էջ 82-89:

ДАВИТАВЯН ТИГРАН АРШАЛУЙСОВИЧ

СПЕЦИАЛЬНЫЕ СЛУЖБЫ АЗЕРБАЙДЖАНА И ИХ АНТИАРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ (КОНЕЦ XX – НАЧАЛО XXI ВЕКА)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - «Всемирная история». Защита состоится 11-ого июля 2016 г., в. 12:30, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г.Ереван, пр. М.Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Кандидатская диссертация посвящена исследованию азербайджанских специальных служб и их антиармянской деятельности в период с конца XX века и до начала XXI века. В работе изучено также возникновение и антиармянская деятельность азербайджанских спецслужб во времена Азербайджанской демократической республики (1918-1920 гг.) и в период существования Азербайджанской ССР (1920-1991 гг.).

Работа имеет как историческое, так и важное прикладное значение.

Положения и выводы диссертации могут быть полезными как для историков, политологов, востоковедов, так и других специалистов, занимающихся изучением вопросов армяно-азербайджанских отношений, могут использоваться в военно-образовательных учреждениях в качестве учебного материала.

Главной целью диссертационной работы является исследование азербайджанских спецслужб и их антиармянской деятельности.

Для достижения указанной цели поставлены следующие задачи диссертационного исследования:

- Разработка общей характеристики деятельности специальных служб Азербайджана и их антиармянской направленности в периоды с 1918 по 1920 и с 1920 по 1991 гг;
- Изучение правовых основ деятельности специальных служб Азербайджанской Республики, а также основные направления этой деятельности на современном этапе;
- Исследование фактов массовых убийств армян и этнических чисток, имевших место в Азербайджане и Арцахе, а также роли специальных служб Азербайджана в противодействии Арцахскому движению;

- Выявление и анализ особенностей разведывательно-подрывной деятельности специальных служб Азербайджана против РА и НКР.

Диссертация состоит из введения, трёх глав, каждая из которых состоит из параграфов, из заключительной части, списка использованных источников и литературы.

В введении работы достаточно обоснованно представлена актуальность темы данного исследования. Приводятся также цель и задачи исследования. Автором тезисно раскрыты основные положения, выносимые на защиту. Далее во введении представлены методологиические основы исследования, обозначена практическая значимость работы. В рамках исследования проведен анализ соответствующих трудов и источников, относящихся к теме диссертационного исследования.

Первая глава – **"Специальные службы Азербайджана и основные особенности их деятельности (1918-1991 гг.)",** – посвящена антиармянской деятельности специальных служб Азербайджана в период Азербайджанской демократической республики (1918-1920гг.) и Азербайджанской ССР (1920-1921 гг.). Начало истории азербайджанских специальных служб было положено 28 марта 1919 г., после чего эти службы стали осуществлять антиармянскую деятельность, которая не прекращалась даже в советский период.

Вторая глава – **"Специальные службы Азербайджанской Республики, правовые основы и основные направления их деятельности",** – посвящена вопросам деятельности специальных служб Азербайджана, начиная с 1991 года, в частности, правовым основам этой деятельности, а также основным направлениям и задачам деятельности специальных служб Азербайджана в этот период. В рамках исследования обосновано, что властями Азербайджана была поставлена задача перед специальными службами страны развернуть широкомасштабную антиармянскую деятельность, в том числе – террористическую, разведывательно-подрывную, информационно-пропагандистскую.

Третья глава озаглавлена **"Антиармянская деятельность специальных служб Азербайджанской рескублики (конец XX — начало XXI века)",** в которой детально представлена роль специальных служб Азербайджана в организации и проведении массовых убийств армян, противодействии Арцахскому движению, а также роль этих служб в разведывательно-подрывной деятельности против РА и НКР.

С 1993 года по настоящее время органами национальной безопасности Армении были привлечены к уголовной ответственности 18 агентов специальных служб Азербайджана, а также пресечена деятельность более десятка азербайджанских разведчиков и диверсантов, которым кроме общих разведывательных заданий, было поручено совершение диверсионно-террористических актов.

TIGRAN A. DAVITAVYAN

AZERBAIJAN'S SPECIAL SERVICES AND THEIR ANTI-ARMENIAN ACTIVITY (THE END OF THE 20TH CENTURY-THE BEGINNING OF THE 21ST CENTURY)

The defense of the dissertation will take place at 12:30, on the 11th of July of 2016, the meeting of the Specialized Counsil 006 "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA.
Address: Yerevan, 0019, M. Baghramyan Ave., 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of History in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

The dissertation refers to the study of Azerbaijani Special Services and their anti-Armenian activity in the Democratic Republic of Azerbaijan (1918-1920), the Azerbaijan SSR (1920-1991) and the Republic of Azerbaijan at the end of the 20th century and at the beginning of the 21st century.

The dissertation has historical and scientific, as well as practical significance.

The main provision and conclusions of dissertation can be useful to historians, political scientists, Orientalists, as well as other specialists studying Armenian-Azerbaijani relations. It can also be used as an educational material at military educational institutions.

The aim of the dissertation is to study the Special Services of Azerbaijan and their anti-Armenian activity, for which we have set the following objectives.

- to study the Special Services of Azerbaijan and their anti-Armenian activity in 1918-1920 and 1920-1991
- to explore the legal grounds for activities of Azerbaijani Special Services, their main directions, tasks and objectives
- to study the participation of Azerbaijani Special Services in the ethnic cleansing and massacres of Armenians in Azerbaijan and Artsakh, as well as in the suppression of the Artsakh movement
- to study and cover the intelligence-subversive activities of Azerbaijani Special Services against the Republic of Armenia and Nagorno-Karabakh Republic at the end of the 20th century and at the beginning of the 21st century.

The dissertation consists of introduction, three chapters, which are divided into subchapters, conclusion and list of sources and bibliography.

The introduction discusses the relevance of the topic, the aims and objectives of the dissertation, presents the methodological basis of the work and the scientific innovation, chronological boundaries of the topic, motivates, the practical significance of the dissertation and provides a brief overview of the sources and research literature used in the dissertation.

The first chapter, which is entitled **"SPECIAL SERVICES OF AZERBAIJAN AND THE MAIN PECULARITIES OF THEIR ACTIVITIES" (1918-1991),** discusses Azerbaijani Special Services and their anti-Armenian activities in the Azerbaijani Democratic Republic and the Soviet Azerbaijan. The history of the Azerbaijani Special Services started on March 28, 1919. Soon afterwards these services took up the task of implementing anti-Armenian policy, which, sometimes implicitly, sometimes explicitly, continued during the Soviet era.

The second chapter, entitled **"SPECIAL SERVICES OF THE REPUBLIC OF AZERBAIJAN, LEGAL GROUNDS FOR – THEIR ACTIVITY AND MAIN DIRECTIONS",** provides information about the Special Services operating in Azerbaijan in 1991, legal bases for their activity, activity areas and tasks assigned to them. In particular, it states that Azerbaijani authorities tasked the country's special services to start anti-Armenian activities, including acts of terrorism, reconnaissance and sabotage infiltration, spread of disinformation, propaganda, hacking, etc. at the same time, counterintelligence agencies used the voice of religious, ethnic and national minorities in order to suppress the socio-political movements.

The third chapter, entitled **"ANTI-ARMENIAN ACTVITIES OF SPECIAL SERVICES OF THE REPUBLIC OF ARMENIA" (THE END OF THE 20TH CENTURY-THE BEGINNING OF THE 21ST CENTURY),** presents facts about the role and participation of Azerbaijani Special Services in the massacres of ethnic Armenians in Azerbaijan in 1988-1991, involvement of the aforesaid Special Services in the suppression of the Artsakh movement, as well as their intelligence-subversive activity against the Republic of Armenia and Nagorno-Karabakh Republic at the end of the 20th century and at the beginning of the 21st century. Between 1993 and 2016, Armenia's National Security Service arrested 18 agencies recruited by the Azerbaijani Special Services who, besides collecting different types of information, were also instructed to carry out acts of sabotage and terrorism.

CONCLUSION summarizes the results of the study.